գաղարձումները, չը նայելով, որ ահա մեռ մի տարի է, որ ընարված է, բայց տակավին գպրոցների քննական մասը կամ հաշիները չէ ընդունել իր ձեռքը։ Ինչ որ վերաբերում է ուսումնական մասին, նրանք սպասում են մինչև տարեվերջ, որ քննությունների ժամանակ տեսնեն, թէ որքան բաւականութիւն կամ յետադիմութիւն են արել գպրոցները. բայց նախապէս չեն հոգում տեղի կամ վարտիտների գործունէութեան վրա։

Մեզ գրում են վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ, թէ անցեալ տարի մեր գպրոցները երկրորդ և երրորդ դասարաններ ունէին, բայց դարձեալ ծախքերը այնպէս էին կարգադրված, որ գպրոցների եկամտաբերը ծածկում էր բոլոր ծախքերը։ Իսկ այս տարի, չը նայելով, որ երկրորդ և երրորդ դասարանները փակվեցան, այսուհանդերձ, ծախքերը այնքան բազմացրին, որ գպրոցները տարվայ վերջը հիմնական կողմից բաւական վնաս պիտի կրեն։ Նամակագիրը պ. պ. երեսփոխանների ուշադրութիւն է դարձնում այդ անկարգութեան վրա, որ վճռեց է ապառնում գպրոցների հիմնական գոյութեան։

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են, որ գպրոցների աշակերտների և աշակերտուհիների թիւ՝ աճեցնելու պատճառով, աղքատ ծնողներից շատերը դուրս տարան իրանց զաւակներին և այսպէսով գպրոցների եկամուտը աւելի քան 500 ռուբլի պակասեց, և բացի դրանից, աղքատների որդիները զրկվեցան ուսումից, որ չատ ցաւալի է։ Հարուստները իրանց որդիները ամեն քաղաք ուղարկելու և ուսում տալու կարողութիւն ունեն։

—

Ստացանք յօգուտ վ.անի սովատանջների թիՓԼԻՍԻՍ բնակվող հետևեալ անձինքներից հետևեալ նուէրները. Գրիգոր Տէր-Գէորգեանցից 1 ր., Ամիրյան Մահաեսի Աւանովից 40 կ., Մկրտիչ Տէր-Սարգսեանցից 1 ր., ընդամենը 2 ր. 40 կ.։

—

Մեզ գրում են Կ. Պոլսից որ մարտ ամսոյ անցնելով և ապրիլը մտնելով սովը երևի աւելի էլ պէտք է տարածվի և սաստկանայ թիւրքայ Հայաստանում. Այժմ ամբողջ Հայաստանը և Փոքր-Ասիան զոհ է սարսափելի սովի։ Սովատանջ մարդիկի չդիմեն սկսվելով Բայազէդից, վանից և Աբուլեիրտից և անցնելով Էրզրումի մոտով, տարածվում է մինչև Բաղդադ, հասնելով մինչև Ծովի եզերքը։ Ահա այն գլխաւոր տեղերի անունները, որանք զանվում են սովի ճանապարհի վրա՝ Կարին, Բասէն, Բայազէտ, Աշտարակ, Մուշ, Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Սղերդ, Մոսուլ, Քէրքիւք, Մէրդին, Բաղդադ, Պիլէնճիք, Լանիդէվիր, Պուռսա, Եալովա, Նիխոմիդիա։ Մի խօսքով ամբողջ Հայաստանը և ամբողջ Փոքր-Ասիան հասնում է սովի անգութ հարուածի տակ։

—

Ստացանք յօգուտ վ.անի սովատանջների 17 ռուբլ գերմանական Պետերբուրգ քաղաքից, որ նուէրատուութեամբ հասցրեց իր գերմանացի բարեկամներից հայ ուսանող Աւետիս Արամիանանց։ Նամակը կը ապէնք։

—

ՕՌԼՍԱՆԻՑ ստացանք պ. Բ. Շեխենանցից 14 ռուբլ յօգուտ վ.անի սովատանջների։ Նուէրատուները անձինք սրանք են. Կոգան (Տրէայ) 1 ռ., Աէքքանդր Եղիազարեանց 5 ռ., Միքէլ Բաբիչեանց 5 ռ., Կարապետ Խաչատուրով 3 ռ.։ Ընդամենը 14 ռուբլի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը։

Իշխ. Բիսմարկի հրաժարական պատմութիւնը երևի այնպէս կը վերջանայ, ինչպէս վերջացել են միշտ այդպիսի դէպքերը գերմանական պետական կանոնների գործունէութեան ընթացքում։ Ալիհելմ կայսրը հրաժարվեց ազատել իշխան Բիսմարկին այն պարտականութիւններից, որանք նրա վրա դրված են և բարձրացրել նը։ բաան հրատարակեց, որով իրաւունք տուեց կանոնների դիմել առաջ իրան, կայսրին, իսկ յետոյ Միացեալ Թագաւորութեան և առաջարկել կայսերական սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածների փոփոխութիւնը։ Այդ յօդուածները որոշում են Գերմանական Կայսերութիւնը կազմող պետութիւնների ձայնների քանակութիւնը Միացեալ Թագաւորի մէջ։

Գերմանական կանոնները ապահովված է, որ կայսրը կը տայ իր համաձայնութիւնը այդ փոփոխութեան համար։ Այդ իրաւունքը երևում է կայսրի հրամանից, որի մէջ ասված է «առաջարկել առաջ ինձ և յետոյ Միացեալ Թագաւորին»։ Այդ խօսքերը կայսրը չէր ասի, եթէ առանց չը վճռէր համաձայնել իշխան Բիսմարկի առաջարկած փոփոխութիւնների հետ։ Մնում է Միացեալ Թագաւորի համաձայնութիւնը, որ գերմանական սահմանադրութեան հաստատ անհրաժեշտ է։

Դժուար է նկատել, որ Միացեալ Թագաւորը մերժի տալ իր համաձայնութիւնը։ Իշխան Բիսմարկ Թագաւորի մէջ արդէն 28 ձայներ իր կողմն ունի և կարող է մի երկու կամ երեք ձայներ էլ իր կողմը քաշել։ Մասարված զորքի համար այդ ձայները անհրաժեշտ են և երբ իշխանը ձեռք կը բերի դրանց, նա կարող է համաձայն փոփոխել սահմանադրութեան այն յօդուածները, որանց իր համար անպարար է համարում։

Ինչպէս երևում է, իշխան Բիսմարկ այդ նպատակին հասնելու համար սկսեց իր հրաժարական պատմութիւնը։ Մենք չենք զարմանայ, եթէ վերջը տեղեկանանք, որ Միացեալ Թագաւորի մէջ Բիսմարկի աշխատանքներով կազմվեցաւ նրան թշնամի մեծամասնութիւնը, որպէս զի իշխանը կարողանար գերմանական սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածների փոփոխելու խնդիրը բարձրացնել։

Ահա՛ երևում է, որ իշխան Բիսմարկի համար այդ յօդուածների փոփոխութիւնը մեծ նշանակութիւն ունի։ Ցայտնի է, որ իշխանը մի տարի է ուղղել գերմանական ֆինանսների վատ դրութիւնը ծխախոտի մենատնտեսութիւնը հաստատելով։ Եթէ նա կը կարողանա իրագործել այդ մտադրութիւնը, գերմանական բիւջեան պակասորդները աւելորդներ կը փոխվին և այդպիսով իշխանը միջոցներ կունենայ իրագործել իր նպատակները։ Ի հարկէ ծխախոտի մենատնտեսութեան հարցի վճռելը վերջ է վերջոյ կախված է կայսերական պարլամենտից, բայց Բիսմարկի պարլամենտի մէջ շատ անգամ պատերազմել է իր առաջարկած օրէնքների հակառակորդների հետ և այդ պատերազմները միշտ վերջացել են իշխանի յաղթութիւններով։

Աւելորդ է Միացեալ Թագաւորը։ Առանց նրա համաձայնութեան չէ կարելի կատարելագործութեան կողմից պարլամենտին որ և է նախագիծ առաջարկել և բացի այդ Թագաւորի մէջ կարող է կազմվել այնպիսի մեծամասնութիւն, որ կը ցանկանայ իշխանի հեռանալը կատարվելուց։

Եթէ սահմանադրութեան 16 և 17-դ յօդուածների Բիսմարկի ցանկութեան համեմատ փոփոխվին, Միացեալ Թագաւորը կը կորցնի իր այժմեան նշանակութիւնը։ Այդ դէպքում միայն երկու պետութիւններ (Պրուսիա, Սաքսոնիա և Բաւարիա) Թագաւորի մէջ ձայների մեծամասնութիւն կունենան, իսկ այդ պետութիւնների ներկայացուցիչները գործում են իշխանի ցանկութեան համեմատ։ Այդպիսով ոչ ոք չի կարողանայ վերահսկել Բիսմարկի գործողութիւնների վրա և նա ամեն բան կը կարողանայ անել։

—

«GRAPIC» ՇԱԲԱԹԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Բաւական քաղաքավարութեամբ ենք անում անգլիերէն «Grapic» շաբաթաթերթի սոյն ապրիլի 10 հրատարակած համարից։

«Contemporary» լրագիրը յայտնի է, իր վերջին ուղղութեամբը, և արդարև միայն նա է ուրիշ շատ ամսագրերի թւում, որ այս ամիս հրատարակվելիս ընարզութեանց մասին կողմնակցութեան խօսք չասաց։ Նա բերում է մի յօդուած the Armenian question «Հայոց խնդիր» վերնագրով և ստորագրված an Eastern statesman մի արևելյի դիւանագէտ. այդ յօդուածը հրատարակվում է խիստ յարմար ժամանակին։ Ասեցինք շարաթ էր որ մենք յիշեցինք մի շատ երևելի հեղինակութիւն Armenians, Koords and Turks, հայերը, քուրդերը և թուրքերը James Creaghe գնդապետի հիրալիր գրչից գրված, և հիմա մենք շատ ուրախ ենք որ մի այդպիսի բարձր և ձեռներեց հեղինակը ինչպէս է «մի արևելյի դիւանագէտը, որը մեր աներկբայ համոզման համեմատ, մի ուրիշը չէ, բայց եթէ պարսից դեսպան և ինքը մի հայ Մելքոմխանը, հաստատում է մեծարոյ գնդապետի գաղափարները։ «Հայոց խնդիրը» այնպէս սերտ կապված է այն մեծ արևելեան խնդրի հետ, որ հէնց հիմա պահանջում է իր լուծումը, որ մենք պարտք ենք համարում մեզ համար այս յօդուածը յանձնարարել նրանց ուշադրութեանը, որոնք փափաք և պարտականութիւն ունեն հիմնատարպէս ծանօթանալու սոյն ամենակարևոր նիւթի հետ որ շուտով ամեն միւս խնդիրները կա պիտի մղէ։ Վերջի շարաթները լիքն էին մեր թերթերը այն հարստահարութեանց պատմութիւններովը, որոնց ենթարկված են հայերը քրդերի կողմանէ, այն սովի լուրը որ հիմա տիրում է այն երկրում։ Լրագրագիրի նախագահութեան ներքոյ մի յանձնաժողովի կազմուելն առիթ եղաւ, որ նրանց նեղութիւնը թեթևացնեն. բայց Անգլիան է գտնվել և ոչ թէ Ռուսաստանը, որ շարժում է այն խնդիրի կրած անիրաւութիւնքը ամոքելու։ Արևելյի դիւանագէտը յառաջ է բերում Բերլինի դաշնագրութեան 61-դ յօդուածը, որ ապացուցանէ թէ մեկ փոքր չէ եղած ամենայնի քրիստոնեայ ազգի (Հայոց) շահերի պաշտպանութեան համար։ Մենք հաւատում ենք որ մեր բազմամեայ կառավարութիւնը յարմար կը դտաէ սոխալել Ռուսաստանին որ կատարէ իր առաջ առաջ տուած խոստումները երրորդ Ռուսաստանը թեթևում էր նրա Կ. Պոլսի զբաղմունքներ։»

ՖՐԱՆՍԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Փարիզից։

Արդեղված միաբանութիւններին վերջին ժամանակներում կատարվելիքից առած հարուածները նրանց չը վախեցրեց։ Նրանք մասագիր են օրինաւոր բոլոր այժերով ընդդիմանալ կառավարութեան այն խիստ հրամաններին, որանք արգելում են նրանց գոյութիւնը առանձնավոր պայմաններով։ Արդէն զի պատերազմը աւելի աջող հետ՝անքներ ունենայ, բոլոր միաբանութիւնները վճռեցին բաժանել եղբայրների վիճակը, այսինքն արգելված միւս միաբանութիւնները վճռեցին չը հնազանդվել ֆրանսիական կառավարութեան հրամաններին և իրանց գոյութեան համար թոյլատուութիւն չը խնդրել։ Այսպիսով կառավարութիւնը ստիպված կը լինի փակել նրանց և հանձնել անբարեկամութիւնների թիւրն էլ կը շատացնէ։

Եթէ միաբանութիւնները մինչև վերջը հետևեն իրանց այդ վճռին, նոքա կարող են մասամբ դժուարացնել կառավարութեան գործունէութիւնը։ Բանը նրանում է, որ եթէ միաբանութիւնը կամենայ կրնը Ֆայրսեցիների հասցնել և փակ արգելված միաբանութիւնների բոլոր հիմնարկութիւնները, այդ դէպքում մոտ 200 00 ուսանողներ պարապ կը մնան։ Պետական դիմեցանները առանց այդ էլ լի են և այդքան աւելորդ աշակերտներին չեն կարող ընդունել։

Բայց հարկ թէ գործը այդ ծայրայեղութեանը հասնի։ Մի քանի միաբանութիւններ այնքան չեն սիրում եղբայրներին, որ համաձայն են բաժանել նրանց վիճակը։ Այս վերջինները ասելի էլ դրդում է բաժանել եղբայրների վիճակը մի քանի պատգամաւորներից և սենատորներից կազմած մասնաժողովս, որ ամեն միջոցներ գործ է դնում միաբանութեան կարգադրութիւններին ընդդիմանալու համար։ Այդ մասնաժողովը առաջնորդում է միաբանութիւնների ընդդիմադրութեան, իրաւաբանական խորհրդածութիւններ է հրատարակում, միաբանութիւններին փաստաբանելիք է տալիս և այլն։

Արդէն հիմա միաբանութիւնների մէջ բաղկում է աւելի խաղաղասիրական ոգի սիրելի։ Շատերը պնդում են, որ գոնէ կանանց միաբանութիւնները հնազանդվեն կառավարութեան պահանջներին և թոյլատուութիւն խնդրեն իրանց գոյութեան համար։

Միաբանութիւնների ընդունած վճռի մէջ եղած իաներին վճռակիրց լինելու մասին հետաքրքիր է այն, որ դա թոյլ է տալիս դասաղութիւններ տալ Հռոմի մէջ սիրապատած արամադրութեան մասին։ Սկսելու է, որ, եթէ պապը ցանկանար գլխումներ անել, նա խոյսն կը հրամայէր միաբանութիւններին, որ նրանք կատարեն կառավարութեան պահանջները։

Հռոմից ստացված լուրերից երևում է, որ պապը բոլորովին չէ ծածկում իր անբաւականութիւնը Ֆրանսիայի միաբանութեան կարգադրութիւնների դէմ։ Երբ Ֆրանսիական Դեր գեսպանը Հռոմի մէջ ողջունեց պապին, սա յայտնեց իր ցաւակցութիւնը այն միջոցների առիթով, որանց Ֆրանսիական կառավարութիւնը այժմ դիմել է։

Անգլիական ազատամիտ կուսակցութեան յաղթութիւնը վերջին ընտրութիւնների ժամանակ չափազանց դարձրեց Ֆրանսիացի քաղաքագէտներին։ «République Française» լրագիրը, որ սաստիկ ցանկանում էր պաշտպանել նպատակների յաղթութիւնը, սկզբից չէր կամենում մինչև անգամ հաւատալ, որ Անգլիայում ազատամիտ միաբանութիւն կազմվեր։

Հանրապետական և միապետական բոլոր ազատ մտքերը ուրախ է, որ անգլիական ազատամիտ կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ։ Անգլիայի, Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ կապիլու գաղափարների երևիլը բոլորովին անհեթեթաւ։ Անգլիայի և Ռուսաստանի ազատ ազատվող բարկամութիւնը, ընդհանուր կարծիքի համեմատ, եւրոպական դաշնակցութեան ձեր և եւրոպական քաղաքականութեան ուղղութիւնը կը փոփոխէ։ Այդ բարեկամութիւնը հաստատելու համար Ֆրանսիան կարող է միջնորդ լինել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 93 7/8 ր., երկրորդ 92 7/8 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 1/8 ր., ներքին 5% առաջին տոմակը արժէ 226 ր., երկրորդ 919 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 79 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 2525 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 127 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա 215 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 265 ֆր. 50 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հայտարարում է հետևեալ բրիլանտեր Կարսրու առաջնորդութեան մասին. անցեալ շաբաթվից ընթացքում Կարսրու առաջնորդութեան մէջ առանձին փոփոխութիւն չէ նկատված։ Շաբաթվայ սկզբում Թագուհուն անհանգիստ էր անում հաղը, սենդային գրութիւնը չափաւոր էր։ Ախորժակը և քունը բաւականացուցիչ են, այժմերը պահպանվում են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 226 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր. 87 կ., ոսկի 7 ր. 78 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ։ Բորսայի տրամադրութիւնը ամուր է։

խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՐՈՒՆԻ